№ 70 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 29 — 1901 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 29 № 70

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱՓԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խոշոր ձեռնարկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պ. Շէքերջեանի նամակի առիթով. Նամակ Խմբագրութեան Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղական ցաւերից.

ԽՈՇՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի քանի խոշոր ձեռնարկութիւններ, որոնք պահանջում են իրանց իրագործութեան համար միլիոններ և որոնց մասին մի քանի տարիներ առաջ մենք չէինք էլ կարող մտածել, այժմ դարձել են շօշափելի և հեշտ լուծելի խնդիրներ: Այդպիսի ձեռնարկութիւնների շարքումն են՝ Ապշերօնեան թերակղզին ջրանցքով կտրելը և Բօմանիի ընդարձակ լճի ցամաքեցնելը: Այդ երկու ծրագիրները դարձել էին քննութեան առարկայ և այն յատուկ խորհրդակցութեան մէջ, որ նորերս տեղի ունեցաւ Պետերբուրգում երկրագործութեան մինիստր Երմօլովի նախագահութեամբ և ֆինանսների մինիստրի օգնական Կօվալեվսկու մասնակցութեամբ:

Ապշերօնեան թերակղզին ջրանցքով կտրելը՝ ինժեներ Սուլթանովի ծրագրով՝ կը պահանջէ մինչև 17 միլիոն ռուբլի ծախք: Ջրանցքը, որ կունենայ քսաներկու վերստ երկարութիւն և տասն չորս սաժէն լայնութիւն, կարողութիւն կը տայ նաւերին և շոգենաւերին կարճ գծով երթևեկել և այլ ևս չը պտտել ապշերօնեան հրուանդանի շուրջը: Այդպիսով առաջ կը գայ թէ ժամանակի մեծ խնայողութիւն և թէ նաւերի համար մեծ ապահովութիւն: Այդ ծրագրի վերջնական քննութիւնը թողված է առաջիկայ նաւթարդիւնաբերական ժողովին, որը և պէտք է յայտնէ իր վերջնական կարծիքը, թէ որքան ձեռնտու է այդ գործը յանձնել մասնաւոր ձեռնարկողներին:

Միւս ձեռնարկութիւնը, այն է Բօմանիի լճի ցամաքեցնելը, պէտք է աւելացնէ նաւթաբեր հողերի տարածութիւնը և վերջնականապէս ապահովէ հեղեղներից այն շրջանը, որ մինչև այժմ մշտական վտանգի մէջ էր գտնվում: Բօմանիի լճի ցամաքեցնելով կը բացվի նաւթային հողերի մի ընդարձակ տարածութիւն, այն է մօտ 160 դեսեատին տեղ: Լճի ցամաքեցման համար կան առաջարկութիւններ դրամատէրերի կողմից, որոնք յանձն են առնում այդ կատարել այն պայմանով, որ իրանց տրվեն արտօնութիւններ ցամաքեցրած տեղերը շահագործելու իրանց օգտին:

Մեր կարծիքով աւելի նպատակայարմար կը լինէր, որ այդ գործը իր վրա վերցնէր կառավարութիւնը և իրագործէր պետական ծախքերով: Այն ժամանակ բացված նաւթահողի շահագործութիւնը կը դառնար մի այնպիսի ձեռնարկութիւն, որին կարող կը լինէին մասնակցել ցանկացողները ըստ մրցութեան: Միայն կարևոր է մի պայման, որ կառավարութիւնը չը յետաձգէր այդ գործը և անմիջապէս ձեռնարկէր նրա իրագործութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. ՇԷՔԷՐՋԵԱՆԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ Խմբագրութեան)

Իմ վերջին «Բժշկի զրոյցների մէջ» ես խօսել էի այն անհաւատալի բժշկութեան մասին, որ իբր թէ կատարում է Շուշում պ. Շէքերջեանը: Ես հրաւիրել էի պարոնին հերքել այդ լուրերը, կամ բացատրել, որպէս զի մեր խեղճ, առանց այն էլ բժշկից խորշող ու նախապաշարմունքների տիրմի մէջ խրված ժողովուրդը աւելի ևս չը նախապաշարվի:

Մեր պարտքն էր այդ անել, եւ մենք դիմեցինք պ. Շէքերջեանին քաղաքավարի հրաւէրով, իբրեւ ինտելիգենտ մարդու, որ կրում է բժշկի պատուելի ու բարեխղճութիւն պահանջող տիտղոսը:

Եթէ մի ուրիշը լինէր պ. Շէքերջեանի փոխարէն, նա հարցը պարզելու համար բաւականութիւն կը տար այս իմ, իբրեւ ընկերակցի, իրաւացի հրաւէրին եւ իր բժշկութեան ձեւը կը բացատրէր: Բայց պարոնը անուշադիր թողեց իմ բարեկամական խորհուրդը եւ նախաձեռնեց բանակռուի մտնել պ. Արցախեցու հետ:

Դժբաղդաբար, ստիպված եմ նկատել, որ պարոնի պատասխանը ոչ միայն չէ հերքում պատող լուրերը, այլ, ընդհակառակը, ակներեւ է անում պարոնի մէջ հրաշքային բժշկութիւնները շարունակելու վստահութիւնը եւ մի առանձին արհամարհանք դէպի մեր երկրում ընդունված բժշկական էթիկան:

Դառնանք նամակին:

Մենք ցանկացել էինք իմանալ, թէ ճշմարիտ է արդեօք, որ պարոնը յանձն է առնում առանց դեղի, մագնէտիզմով բժշկել այնպիսի հիւանդութիւններ, որոնք մեր գիտութեան տեսակէտից անբուժելի են համարվում, անբուժելի գոնէ հիպնօսական ձեւերով:

Պարոնը չէ հերքում այդ եւ Ծոյն իսկ բացատրութիւն է տալիս:

Մեզ համար հետաքրքրական են այդ բացատրութիւնները:

Նա ասում է. «Ես բժշկում եմ հիպնօտիզմով եւ մագնէտիզմով. թէպէտ առաջինով դեռ Շուշում ոչ ոքին չեմ ենթարկած բժշկութեան. այստեղ ես առ այժմ բժշկում եմ հիւանդներին միայն մագնէտիզմով, այսինքն իմ կենդանական մագնիտով (իմ մատներով, իմ շնչով, մագնիտացրած ջրով, շորով եւ այլն):

Այս էր մեզ հարկաւոր գիտենալ եւ իմացանք:

Պարոնը մի դար ետ է տանում մեզ իր թէօրիաներով:

Մենք չուտով մի ուսումնասիրութիւն կը տպենք հիպնօտիզմի մասին, ժողովրդին պարզ գաղափար տալու համար այս գիտութեան վերաբերմամբ, որովհետեւ վճռել ենք կուռել այն բոլոր երեւոյթների դէմ, որոնք ընդունակ են խռովեցնելու ժողովրդին ու նրա մէջ բժշկականութեան մասին սխալ գաղափարներ տարածելու:

Այս է մեր գործունէութեան միակ նպատակը եւ այդ նպատակին հասնելու համար մենք պէտք է անխնայ լինենք դէպի այն անձինք, որոնք կանգնում են մեր ճանապարհի վրա:

Ասացինք, որ պ. Շէքերջեանը իր կենդանական մագնէտիզմով մի դար ետ է տանում մեզ:

Եւ, ճշմարիտ, տասնութերորդ դարի վերջերումն էր, երբ մարդիկ կարծում էին, (ինչպէս քսաներորդ դարում պ. Շէքերջեանն է կարծում), թէ մարդուս մէջ մի առանձին հեղուկ կայ, որը կարելի է զանազան քսուքների (պասսեր) կամ մի որ եւ է միջանկեալ առարկայի միջով հիւանդի մէջ ներլցնել եւ դրանով բժշկել նրան: Մէսմէրն էր այս կենդանական մագնէտիզմի ստեղծողը. այս պատճառով էլ այդ մագնէտիզմը կոչվում է եւ Մէսմէրիզմ:

Այս ուսմունքը հերքեց աբբայ Ֆարիան, որը առաջին անգամ առաջ բերեց մի նոր գործիչ — ներշնչումն: «Կարծեմ պարզ է արդէն, ասում է նա, որ անմտութիւն է մի որ եւ է մագնիսական հոսանքի գոյութիւն ենթադրելը»: Այս խօսքերը արտասանելուց մի դար է անցել, հիպնօտիզմի պատմութիւնը արձանագրել է մի մեծ լեգէօն գիտնականների անուններ եւ մի շարք հրաշալի գիւտեր, եւ դարձեալ Շուշու բժիշկը մնացել է պաշտպան Մէսմէրի թէօրիայի, այն Մէսմէրի, որին «մեծ շարլատան» անունն էին տալիս:

Այժմ ոչ մի լուրջ գիտնական, որ հիպնօտիզմով է պարապում (գոնէ Եւրոպայում), չէ մտածում անգամ իր մէջ մի որ եւ է ոյժ, մի որ եւ է մագնիս ենթադրել: Պ. բժշկի ոչ մատներ, ոչ շունչ, ոչ մագնիսած ջրի ու շորի մէջ—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

(Ցեսարաներ Ախալքալաքի գաւառի կեանքից)

IV

Խումբ-խումբ քաղաք են լցվում ցուցակագրված գիւղացիք իրանց բաժինը ստանալու: Ակիւր են բաժանում. առաջ է գալիս մի ծերուկ:

—Աղա, ինձի ա տուէք, տունս փրկութեն չը կայ, տղաքս անօթի են...:

—Անունդ ինչ է:

—Իմ անունս գրած չէ, աղա, ես օրճայի Արեւենցէն իմ:

—Լաւ, դու զեանգին ես (հարուստ), քընը քեզի ալիւր չը կայ...:

Ի՛զուր խեղճ գիւղացին աշխատում է համոզել թէ ինքն յիրաւի մի ժամանակ «լաւ է» եղել, օջախի, մալի տէր, բայց այսօր ոչինչ չունի, տուն անովի անօթի են, նրա աղերսանքն ու արցունքը չէին կարող ալիւր բաժանողներին չեղել որոշված կարգադրութիւնից: Բայց խեղճ մարդը ինչպէս տուն դառնար..., ախր տանը մանր ու խոշոր նրա վերադարձին են սպասում, յուսալով, թէ գէթ մի անգամ կուշտ փորով հաց պիտի ուտեն: Ի՞նչ տար նա հեկեկալով հաց խնդրող մանկիկներին...: Չէ. դատարկ չէր կարելի տուն դառնալ: Նա դիմեց գաւառապետին, ոտներն ընկաւ, լացեց, աղի արցունքով նկարագրեց իր անել դրութիւնը, եւ պ. գաւառապետը կարեկցեց նրան, հրամայեց նրան էլ ալիւր տալ:

Երեկոյ է: Խումբ խումբ գիւղացիները, տոպրակները չալակներին, շտապում են գիւղ: Մի խումբ էլ գնում է Օրճայի ճանապարհով: Նրանց ետեւից, երամը կորցրած կռունկի պէս, չուար ու մոլոր գնում է մի ծերուկ: Նրա դէմքը խոժոռ է ու աչքերը դեռ թաց: Կանգնեց, մտածում է: Ի՞նչ... ով գիտէ..., դուցէ իր անցեալն ու ներկան է համեմատում..., այդ օրվայ դէպքը, իր այժմեան մուրացկի դէրն էր խռովում նրան..., չը գիտեմ..., բայց կէս ժամ յետոյ, երբ օրճացիք իրանց յետ մնացած ընկերոջն էին որոնում, Ախալքալաքի ձորում, ժայռի ստորոտում մի արիւնլուայ դիակ գտան...: Դա օրճացի Արեւենց ծերուկի դիակն էր, որի կողքին ընկած էր տոպրակով ալիւրը, մի ամբողջ ընտանիքի կեանք խոստացող այդ օրվայ արիւն արցունքի պտուղը...:

Ո՛րքան անգութ ես դու, երկինք, եւ ինչքան անողոք է քո ճակատագիրը...:

Ձեզ եմ դիմում գանձացի, փոկացի, սաթխացի... եղբայրներ, սարի գիւղացիներ, ով պիտի օգնէ մերկ, քաղցած դրացիներիդ, եթէ ոչ դուք, դուք, որ գէթ մի կտոր հաց ունէք ուտելու, սերմ ունէք ցանելու, եզ ու գոմէշ, մալ ու ոչխար ունէք, աւելի ապահով, երջանիկ էք ներկայումս, քան ձեր դաշտեցի դրացիները...: Չէ՞ որ «թշուառին թշուառն է միշտ կարեկից»..., էլ որտեղ կը գտնէք դուք ձեր խեղճ դրացուց աւելի թշուառ, աւելի դժբաղդ...:

Դուք գիտէք, ձեր սեփական անձի վրա էք փորձել «չքաւորութիւն» կոչված այդ ահռելի հրէշին: Չէ՞ որ յաճախ դուք հացի պակասութիւն էք ունեցել (թէեւ ոչ այս չափերով), գնել էք ձեր ուտելիքն ու սերմը եւ շատ լաւ էք հասկանում, թէ ինչ ասել է գիւղացու համար հաց չունենալը, հաց գնելը...: Բայց դուք, երբ հաց չէր լինում, էլի մի բան ունէիք ծախելու, որ հացի տայիք՝ մալ, ոչխար, խոտ...: Բայց այսօր այդ խեղճերը ոչինչ չունեն, բացարձակապէս ոչինչ, եղածն էլ մինչեւ այժմ ծախել, ծըխել, հացի, ցամաք հացի տուել, կերել պրծել են...: Փրկեցէք թշուառին...: Նա խստապահանջ չէ, շատ բան չէ խնդրում ձեզանից, մի մի կօդ գարի, թող մրսած լինի, վատ լինի, միայն թէ հաց լինի...: Մի մի կօդ գարով մեծ գործ արած կը լինէք. մի՞թէ պիտի խնայէք այդ չնչին նուէրը ձեր տառապող, սովամահ եղբօրից..., Ձեւ կարծում. ամենայետին աղքատն էլ ձեզանից կարող է կատարել այդ չնչին պահանջը, քանի որ նա գիտէ արցունքի դառնութիւնը, կարիքի խստութիւնը: Տարեկան քանի դառն ու ոչխար «որձ ու ղոչ էք» մատաղ անում որբերին, ունեւոր հայրենակիցներ, հարուստ ոչխարատէրեր: Սրբերը չեն նեղանայ, Աստուած չի զայրանայ, նա ամենաբարի է, այս տարի այդ մատաղը տուէք ձեր դրացիներին, անօթի, դժբաղդ դրացիներին..., կամ գէթ մի կտոր պանիր դրէք նրա չոր, դարի հացին...:

Շիրակի գիւղացիներ, մտիկ դրացիներ, բացէք ձեր Շարայի ամբարները, ձեր ընկած «համքեարին», խեղճ գեղջուկին փրկութեան ձեռք մեկնեցէք...: Նրանք Շարայի պէս անկուշտ չեն, ձեր տուած քիչն էլ մեծ շնորհակալութեամբ կընդունեն: Չէ՞ որ երաշտ տարիներին, չեղած տարիներին ձեր մալն ու ոչխարը ախալքալաքցին էր պահում, պատսպարում...: Այժմ նա չունի, ոչինչ չունի, քաղցած է, թշուառ, օգնեցէք նրան...:

Եւ դուք, սուրբ հայրեր, բիւր վարդապետներ, որ վանքերում նստած մեր ժրաջան գեղջուկի «պտղիով ու սրբադրամով» էք ապրում, այս տարի միք նորոգի ձեր ատլաս ու կերպաս վերարկուները, ձեր «կթի կովը» վերջին չունչն է փչում, գէթ ձեր սեփական շահի տեսակէտից պահեցէք նրան, կերակրեցէք...:

Էլ չեմ դիմում քաղաքացի կրեսոսներին ու նաւթի հերոսներին, նրանք թող իրանք հասկանան. ժամանակը սուղ է, բայց ճակատագրական....

Որքան կարողացել ենք ուսումնասիրել մեր գաւառական կեանքը, որքան թափանցել ենք նրա մութ խաւերը, դժբաղդաբար, միշտ մի եւ նոյն դառն եզրակացութեան, յուսահատութեան հասցնող համոզմունքին ենք եկել, որ մեր գիւղական ժողովուրդը բաժանված է երկու դասի, մէկը (մեծ մասը) աշխատող, տքնող, տոկուն, համբերող, բայց աղքատ, քաղցած, պարտքի տակ ընկճված, հասարակական գործերում իրաւունքներից զուրկ, հլու-հպատակ մի քանի անհատների. միւսը՝ (փոքրամասնութիւնը)՝ հարուստ, աղա, իշխող, հասարակական գործերի ղեկավար, որոնց, սակայն, ծառայեցնում են լոկ իրանց անձնական, սեփական շահերին:

Բայց այսօր, բարեբաղդաբար, (թէ գիւղական թղթակցին Աստուած արժանացնէ միայն) պիտի արձանագրենք մի դէպք, որ ըստ երեւոյթին մեր կարծիքի հակառակն է ապացուցանում, կամ մի սոսկ բացառութիւն է կազմում:

Սաթխա գիւղի հասարակութիւնը մօտ օրերս իր համախոհականով ընտրած հաւատարմատարների միջոցով դատ սկսեց նոյն հասարակութեան տանուտէր Աբրահամ Սանոսեանցի դէմ, որ մեղադրվում է հասարակական փողերի վատնելում եւ կաշառակերութեան մէջ: Պրիստաւի սկզբնական քննութիւնից երեւաց, որ մօտ 140 ռուբլի պակասում են Սաթխայի հասարակական փողերից: Նոյն հասարակութեան խնդիրքով պ. գաւառապետը հրամայել է իսկոյն գործերն առնել յիշեալ Սանոսեանցից եւ յանձնել նրա կանդիդատին, մինչեւ գործի վերջնական քննութիւնը:

Եւ այս բոլորի սկզբնապատճառն ու ղեկավարը, հասարակական շահերի նախանձախնդիրն է սաթխացի յայտնի հարուստ պ. Ստեփան Պալոյեանցը:

Ջաւախեցի

ոչինչ չը կայ։ Կայ միայն ամբոխի յափշտակումը, նրա հաւատը։

Մի մարդ գլխացաւ ունի, նա դիմում է հաւատով պ. Շեքէրջեանին, որը նրան ձեռներով շփում է կամ ջուր է խմեցնում եւ նա կարող է լաւանալ, ճիշդ այնպէս, ինչպէս նա կը լաւանար, եթէ նոյն հաւատով դիմէր մի խաչաքարի, մի աղբիւրի, մի ծառի, արեգակին, եւ այլն եւ այլն։ Հաւատը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ինքնաներշնչումն, այսինքն համոզումն, որ այս սուրբը, այս ծառը, այս բժիշկը կը բժշկէ նրա ցաւը *)։

Ով չէ յիշում պ. Ֆէլդմանին, որը նոյնպէս բժշկութիւն էր անում։ Ո՞վ չէ կարդացել Պետերբուրգի բարձր Վրանգէլի արած հրաշքների մասին, որը բժշկում էր, գիտէք ինչով... Նեվայի ջրով։ Այսպէս է բժշկում Իսան Կրոնշտադտկին, այսպէս եւ տէրտէրը, այսպէս եւ մոլլան, այսպէս եւ ֆալչին, այսպէս ենք վարվում եւ մենք՝ բժիշկներս ամեն օր։ Եւ ոչ ոք իր մէջ կենդանական մագնիս չէ ենթադրում։

Սակայն պ. Նամակագիր բժիշկը այս հայեացքները չունի. նա մագնէտիզմը ջոկում է հիպնոտիզմից եւ այսպիսով զարմանալի կերպով նա բոլորովին բաժանվում է մեզնից, այսինքն մի դար գոյութիւն ունեցող հիպնոսական թէորիայից։

Մեզ համար մագնէտիզմ, մէսմէրիզմ, բրայտիզմ, հիպնոտիզմ միայն բառեր են, որոնք պատմական նշանակութիւն կարող են ունենալ եւ որոնք բոլորը նշանակում են ներշնչումն (suggestion—внушеніе)։ Այն ինչ՝ պ. Շեքէրջեանի համար մագնէտիզմն ուրիշ բան է, հիպնոտիզմն ուրիշ, եւ հէնց իր տիտղոսն էլ այդ է արտայայտում—նա ստորագրում է «Մագնէտիկ-բժիշկ եւ հիպնոտիստ»։

Գալով պարոնի բժշկական աջողութեանը, մենք կը կրկնենք մեր մի ուրիշ յօդուածում ասածը, այն է թէ հիպնոտիզմով, կամ մագնէտիզմով (որ մի եւ նոյն է) կարելի է բժշկել միմիայն ներվային գործունէական (ֆունկսիոնէլ) խանգարումները եւ հիւանդութիւնները, իսկ այնպիսիները, որոնք հետեւանք են օրգանական վնասումների—անբուժելի են հիպնոսով։

Պ. Շեքէրջեանը լաւ տեղեակ չէ երեւում հիպնոսական գիտութեանը, եւ թող ներէ նա մեզ այս ասել, մենք նրան կը համարենք էմպիրիկ կերպով բժշկող, մինչեւ որ չը համոզվենք նրա գիտնական հմտութեան մէջ։

Ցամենայն դէպս, պարոնը բաւական անդիմադրելի է համարում մագնէտիզմի բուժական զօրութիւնը եւ մեծ յոյս ունի ապագայի վրա։ Նրա կարծիքով, այն գիտնականները, որոնք «Ամերիկայում եւ Եւրոպայում» հակառակ կարծիք են յայտնել մագնէտիզմով բժշկութեան դէմ, «իրանց խելքից վեն են գտել այսպիսի բժշկութիւնը»։

Դրա դէմ չը գիտենք ինչ ասենք «Ամերիկայի ու Եւրոպայի» մարդկանց մասին. կասենք միայն, որ մեր խելքից վեր է նրանց գիտութիւնը քննադատելը եւ լաւն այն է, որ նրանց անունը չը տանք։

Բժ. Վ. Արծրունի

*) Տես իմ «Հիպնոտիզմ» գիրքը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուլաւէր, մարտի 6-ին

«Մշակի» 48 համարում պ. Ա. Ի. աշխատում է իր պատասխանի մէջ ապացուցանել, որ իր գրածներով նպատակ չունի անձնաւորութիւններ շօշափել ու հաշւեհաներները չեն կարող առանց ժողովրդի ստուգել տանուտէրի հաշիւները ու դրա համար առաջ է բերում մի պատահած դէպք, որը շօշափում է ինձ։ Վերջին հաշւետուութեան ժամանակ գիւղական դատաւորներից մէկը յիշեցրեց, որ տանուտէրը Մ-ից ժուռք է գրել միայն երկու բուբլի, այն ինչ մենք նրա համար շատ պայմանագրեր ենք վաւերացրել։ Մ., ներկայ լինելով, հաստատեց նոյնը։ Քննութիւններից երեւաց, որ տանուտէրի ութ օր գիւղից բացակայութեան միջոցին նրա օգնականներից մէկը Մ.-ից ստացել է հինգ բուբլի, որի երկուսը ծախսել է գիւղի համար, իսկ երեք բուբլին չէ տուել տանուտէրին, եւ այս դէպքը պարոնը վերագրում է տանուտէրին։

Պարոնը հաշւետուութեան բարոքումն գտնում է բոլոր ժողովրդի ներկայութեան մէջ։ Եթէ այդ հնար լինէր՝ հրահանգը կազմողները կը նախատեսէին։ Հաշւետուութեան օրը ես ցոյց եմ տուել մի ուրիշ միջոց, որով դժուար չէ ստուգել իրողութիւնը։ Այդպիսի մուտքերի գումարը տարվայ մէջ հարիւր բուբլու կը հասնի։ Ուրեմն ինչ միտք կայ 536 ձայնի տէրերին ստիպել երկու օր գործից զրկվել։ Չէ՞ որ եթէ մի մարդու օրավարձը հաշւենք յիսուն կոպէկ, տաս ժանէթի չարագործութիւն գտնելու համար՝ պիտի ժողովուրդը տուժէր 536 բուբլի։ Անշուշտ լաւ կը լինէր, եթէ ինքը ժուռք վճարողը գրագէտ լինէր ու ստորագրէր, բայց նոյն իսկ շատ գրագէտ տեղերում էլ այդ չէ իրագործվում։

Անցած տարիները ես ստիպում էի ժողովրդին ներկայ գտնվել հաշւետուութեան, սակայն նը-բանք, չը համբերելով մինչեւ վերջը, փախչում էին եւ տրտնջում տանուտէրի դէմ։ Նոյնը ես կրկնել եմ եւ այս տարի, մի շաբաթ առաջ յայտարարելով, Ա. Ի.-ի ձեռքով գրած ծանուցումներով, որոնցով պարտք եմ դրել հասարակութեան իրաքանչիր անդամի վրա ներկայ գտնվել այդ օրը։ Վերջապէս որքան հնար է եղել կրկին, աշխատել ենք շատերին ժողովել, թէեւ պէտք է նկատել, որ Շուլաւէրում գտնել մի այնպիսի տուն եւ պարտաւորացնել, որ 536 ձայնի տէրերը ներկայ լինեն, միանգամայն անհնարին է։

Սրանով վերջ եմ դնում բացված վէճին։

Տանուտէր Վ. Մեհրաբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան ցուցահանդէսի կարգադրիչ մասնաժողովը իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, մարտի 27-ին, պարզեց, որ ցուցահանդէսի շինութիւնների եւ զանազան ծախքերի համար հարկաւոր է հարիւր մէկ հազար բուբլի։ Մասնաժողովը հաշւելով ցուցահանդէսից սպասելիք եկամուտները եւ զանազան հիմնարկութիւնների արած նուէրները, պարզեց, որ հարկաւոր է գտնել դարձեալ մի 10—15 հազար բուբլի գումար։ Մասնաժողովը ձեռնարկել է մի շարք միջոցների՝ ճոխացնելու ցուցահանդէսի կրթական մասը եւ տալու օգտաւէտ զուարճութիւններ։

—

Հայ հոգեւորականութիւնը հիւսիսային եւ կենտրոնական Պարսկաստանում վաղուց արդէն վատ յարաբերութիւնների մէջ է գտնվում այնտեղի անգլիական, ամէրիկական եւ ֆրանսիական միսիոնէրների հետ, այնպէս որ նրանց մէջ յաճախ ընդհարումներ են տեղի ունենում։ Հայերը, Köln. Zeitung» լրագրի խօսքով, անդադար գանգատվում են, որ այդ միսիոնէրները գրգռում են նրանց դէմ պարսիկ հոգեւորականութիւնը եւ աշխատում են կասկածի սերմեր գցել հայ եւ պարսիկ ազգաբնակութեան միջեւ եւ թշնամութիւն յարուցանել դէպի Ռուսաստանը։ Այն օրից, որ ռուսաց ազդեցութիւնը զօրեղացաւ Պարսկաստանում, պարսից կառավարութիւնը սկսեց զգալի կերպով աւելի լաւ վերաբերվել հայ հոգեւորականութեանը։ Մանաւանդ այդ բանը աչքի ընկաւ այն ժամանակ, երբ Վեհափառ Կաթողիկոսի հրամանով Բագրատ վարդապետ Վարդազարեանը ուղեւորվեց Սպահան։ Սպահանի ընդհանուր-նահանգապետը, Մուսաուդ Միրզա, Շահի հարազատ եղբայրը, վարդապետին փառաւոր ընդունելութիւն ցոյց տուեց, եւ Սպահանի ազգաբնակութիւնը, որը յայտնի է իր ֆանատիկոսութեամբ, դիմաւորեց նրան։ Օտարազգի միսիոնէրները, ի հարկէ, շատ դժգոհ էին հայ հոգեւորականին ցոյց տուած այդ փառաւոր ընդունելութիւնից։

—

Նոր հանքերի թիւը Կովկասում օրից օր աւելանում է։ Բացի մետալներից հանդէս են գալիս զանազան բաղադրութիւններ, որոնք մինչեւ այժմ բերվում էին մեր երկիրը արտասահմանից։ Այդպիսի բաղադրութիւնների թիւն է պատկանում եւ Քութայիսի նահանգում նորերս գտնված ծանր շպատի հանքը, որը պիտանի է ներկեր պատրաստելու, ապակեգործութեան, ամանների երեսաջրութեան եւ մի քանի ուրիշ արհեստներում։ Մանրացրած եւ զտած շպատը, խառնվելով զանազան ներկերի հետ, տալիս է նրանց աւելի բաց գոյն։ Շիշեր պատրաստելու ժամանակ նա հարկաւոր է իբրեւ անհրաժեշտ բաղադրութիւն։ Նրանից են պատրաստվում եւ բարիտի բոլոր բաղադրութիւնները։

—

Պետերբուրգի «Надежда» ընկերութիւնը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, ձեռք է բերում «Պարսկական ապահովագրական եւ փոխադրող ընկերութեան» ակցիաները, եւ դրա հետ միասին 75 տարվայ կօնցէսիան, որ չնորհել է պարսից կառավարութիւնը։ Ընկերութեան բաժնետէրերի ընդհանուր ժողովը, մարտի 21-ին, հաստատեց վարչութեան առաջարկութիւնը՝ անկախ փոխադրող եւ ապահովագրական գործ սկսելու Պարսկաստանում եւ որոշեց իր դրամագլուխներից 900,000 ր. յատկացնել վերոյիշեալ ընկերութեան ակցիաները գնելու համար։

—

Մեզ հաղորդում են, որ այս տարի Քութայիսի նահանգի եւ Սուխումի շրջանի շատ տեղերում պէտք է փորձեր անվեն բուսցնելու թէյի թուփեր։ Անցեալ 1900 թ-ին Քութայիսի նահանգում արդէն տեղի են ունեցել աջող փորձեր։

—

Մարտի 30-ին լրանում է հարիւր տարի այն օրից, երբ Ալէքսանդր I կայսրը հիմնեց «Непремѣнный совѣтъ»-ը, որ իր գործունէութեան հէնց առաջին օրերից ստացաւ պետական խորհուրդ անուն։ Ցօրելեանի օրը, ինչպէս հաղորդում է «Россія» լրագիրը, լոյս կը տեսնի մի չքեղ ալբոմ, որի մէջ ժողովված կը լինի ամեն ինչ, որ վերաբերում է պետական խորհրդի ծագման եւ հարիւրամեայ գործունէութեանը։ Բացի խորհրդի նշանաւոր գործիչների պատկերներից, ալբոմում զետեղված կը լինեն խորհրդի նիստերի նկարները, Ալէքսանդր I կայսրի ձեռագիրները, Նիստի դահլիճի սեղանի գծագրութիւնը՝ կազմված կայսրի ձեռքով եւ այլն։ Իբրեւ առաջաբան՝ ալբոմին կցված կը լինի մի պատմական բացատրութիւն պետական խորհրդի սկզբնաւորութեան մասին։ Ցօրելեանի տօնախմբութիւնը մարտի 30-ին տեղի չի ունենայ եւ նա յետաձգված է անորոշ ժամանակով։

—

Հրատարակված է Բարձրագոյն հրաման՝ հիմնելու հողաբարձական կոմիտէտ ռուսական պատկերագրութեան համար։ Կոմիտէտը կը գտնվի Թագաւոր Կայսրի անմիջական հովանաւորութեան եւ կոմիտէտի անդամ կոմս Շերեմետեվի Նախագահութեան տակ։ Կոմիտէտի մէջ կը մտնեն ներկայացուցիչներ ռուսաց սինոդից եւ կայսերական պալատի, ներքին գործերի, ֆինանսների, ժողովրդական լուսաւորութեան եւ երկրագործութեան մինիստրութիւնների կողմից։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը միջնորդութիւն է յարուցել, որ պետական գանձարանը 50,000 բուբլի տայ Մոսկվայի պատմական գանձարանին՝ հնութիւնների յիշատակարաններ գնելու համար։

—

Պետական խորհուրդը, համաձայն Բարձրագոյն հաստատած կարծիքի, որոշեց տալ Մոսկվայի հնագիտական ընկերութեան, Կովկասի եւ արեւելեան նահանգների ուսումնասիրութիւնների հրատարակութեան համար, նպաստ 1901 թ-ին 3000 բուբլի, 1902—1905 թուականներին՝ 6000-ական բուբլի եւ 1906 թ-ին՝ 3000 բուբլի։

—

Ապրիլի 4-ին Մոսկվայի համալսարանի դահլիճում կը բացվի ռուս կրիմինալիստների համաժողովը։

—

Պետերբուրգի արտահանութեան գրասենեակների տեղեկութիւններով՝ այլ եւս կասկած չը կայ, որ Անգլիա ներմուծվող շաքարի վրա մաքս կը դրվի։ Այդ մաքսից սպասվում է 6 միլիոն ֆունտ ստերլինգ եկամուտ։

—

ՇՈՒՇՈՒ մեզ գրում են. «Այս տարի ամբողջ ձմեռը համարեա ձիւն չեկաւ. մինչեւ օրս էլ դեռ անձրեւի երես չենք տեսել։ Շնորհիւ այս աննպաստ հանգամանքների, երաշտը վտանգ է սպառնում ապագայ ցանքսերին, եւ եթէ այսպէս շարունակվի, մի Նոր Ախալքալաք մենք էլ կունենանք։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այս օրերս դատարանը քննեց Ալէքսանդրոպոլի եկեղեցական կալուածական գործը։ Գրաւված դպրոցական գոյքերը գուտ եկեղեցու սեփականութիւն ճանաչվեցին, թէեւ պարզվեց, որ հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ, այդ կալուածքների արդիւնքները գործադրվում էին փակված դպրոցների կարիքների վրա»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 22-ին, երեկոյեան պահուն, բաւական ուժեղ քամիներից յետոյ կարկուտ տեղաց, որը թէեւ վնաս չը պատճառեց ոչ այգիներին եւ ոչ էլ դաշտերին, բայց բաւական վնասեց ծառաստաններին, ծառերը արդէն ծաղկած լինելու պատճառով»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Տագանրօգի հայերը ժամադիր են բարեգործական ընկերութիւն հիմնել»։

—

ՔԱՆԱՔԵՌ գիւղից մեզ գրում են. «Մարտի 16-ից այստեղ է բնակվում մեր գաւառական բժիշկ պ. Բէկ-Իսուբովը իր միակ ֆելդշերի հետ։ Որովհետեւ հիւանդութեան եւ մեռնելու դէպքեր դարձեալ լինում են, ուստի գիւղը սանիտարական կողմից շատ մաքուր են պահում. համարեա իրաքանչիւր օր մաքրում են փողոցները, անները, աղբանոցները եւ աղբը այրում, բոլոր տներում կատարվում է դեզինֆէկցիա, ննջեցեալներին եկեղեցի չեն դնում, այլ մի քանի մարդկանցով տանում են հանգստարան։ Շնորհիւ այս հանգամանքի, հիւանդութիւնը գնալով թուլանում է եւ նոր դէպքեր քիչ են լինում։ Լսում ենք, որ բժիշկը պէտք է մնայ գիւղում մինչեւ հիւանդութիւնները իսպառ կը վերջանան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, մարտի 10-ին

Փետրվարի 21-ին, վաշտ մը զօրքեր, ձեռքերնին բահ ու բրիչ, Հայկավանք Թաղին մօտ, Շամիրամակերտի արեւելեան պարիսպներուն կից ընդարձակ գերեզմանատունը քակելու մէջ էին։ Կառավարութիւն յարմար դատեր է հոն մարզադաշտ մը շինելու իր զօրքերուն համար։ Անմիջապէս Սահակ վարդապետ հոն փութալով զօրքերու ապօրէն գործողութեանց մասին դիտողութիւններ կընէ, եւ նոյն օրն իսկ գաւառական վարչութիւնը ժողովի հրաւիրելով՝ բողոքագիր մը կը յանձնէ կուսակալին։ Կուսակալը կը խոստանայ պաշտօնեայ մը տալ իրենց, որպէս զի երթան հոն նայեն, եթէ նշան մը կրցան գտնել տեղւոյն հայոց գերեզմանատուն մը ըլլալուն, աշխատութիւնները դադրեցնել պիտի տայ, քանի որ իրենց օրէնքին ալ դէմ է գերեզմանոցները քակել ու մեռեալներուն ոսկորները անհանգիստ ընել։ Մինչեւ որ խոստացուած պաշտօնեան կուգայ՝ անդիէն զինուորները 4—5 օր կաշխատեն եւ կարգ մը փտած ոսկերոտիքներու հետ գերեզմանաքարեր ալ մէջտեղ կելլեն։ 4 օր առաջ թիւրք պաշտօնեայ մը քանի մը ժողովական հայերու հետ խնդրոյն վայրը կերթան ու խուզարկելով քանի մը կտոր հայերէն արձանագրութիւններով խաչքարեր ալ իրենք կը հանեն 100—200 տարուան հնութիւն ունեցող, սակայն հոն գտնուող վերակացու թիւրք զօրապետը «այդ քարերը դուք հոն դրած էք» կառարկէ...

Խնդիրը դեռ այս վիճակին մէջն է, ու Սահակ վարդապետ մտադիր է հեռագրել պատրիարքարան՝ եթէ կառավարութիւն զոհացում չի տայ իրեն։

Աւելի դէշը հոն է, որ շատ մը ազգային կալուածներ, իրենց սեփականութեան վերաբերեալ պաշտօնական գործողութիւնները չեն տեսած ու սեփականաթղթեր չունեն, որով օր մը չէ օր մը կրնան օտարներէ խրատուիլ։ Հոս ալ կայ «ազգային պանդոկ» անունով ընդարձակ կալուած մը, որ անունով ազգին, բայց պաշտօնապէս անորոշ ըլլալուն՝ օր մը կորսուելու վտանգին կրնայ ենթարկուիլ։ Օրմանեան պատրիարքը իր պաշտօնավարութեան շրջանի ամենէն օգտակար գործը ըրած պիտի ըլլար, եթէ բարեհաճէր Թիւրքիոյ մէջ գտնուող այդ տեսակ անխնամ—անորոշ մնացած բազմաթիւ ազգային կալուածները որոշակի ազգին անուան դարձնել օրինական կերպով։

Վերջացող տարիին հետ կառավարութիւնը վերջացուց երկու շէնքեր, առաջինը Շէրիֆ աղենց Թաղին մէջ զինուորական դպրոց մը, որ իր տեսակին մէջ առաջին հաստատութիւնն է Վանի մէջ, եւ երկրորդը զօրանոց մը Ցանկոյսներ Թաղին մէջ, Հաժուտ աղենց տանը դիմաց, լայն փողոցի մը մէջտեղ, հայ Թաղին կենտրոնը։

Սահակ վարդապետի եպիսկոպոսացումին աշխատելու մասին գրած էի սակէ առաջ։ Այս անգամ, Պոլսի լրագիրներու գրածէն ի զատ, Օրմանեան պատրիարք պատասխաներ է թէ, վարդապետ մը առաջնորդ ըլլալով կրնայ եպիսկոպոսանալ, եւ քանի որ Վանը ի վիճակի չէ գաւառական երեսփոխանական ժողով գումարել եւ Սահակ վարդապետ առաջնորդ ընտրել, հետեւաբար այդ խնդիրը առ այժմ պէտք է մնայ։ Ուրեմն կեցցէ՛ մեր մեռած սահմանադրութիւնը, որ երբեմն այս տեսակ արդար վճիռներու պատճառ կըլլայ...

Հայոց ձորի կեմ գիւղին մէջ սակէ առաջ կաթոլիկները դպրոց մը բացած եւ քահանայ մը դրկած էին։ Անցեալներ Աղթամարի տեղապահ Արսէն վարդապետ յանկարծ յիշելով իր այդ վաղուց մոռացած թեմը—որուն հետ ունեցած պաղիի հաշիւները միտքը ընկած էին անշուշտ—հոն կերթայ, ու կաթոլիկներու խենթ տէրտէրը

անկէ կը վնդէ։ Դոմինիկեանները լսելով այդ բանը, գիւղացիներու անհաւատարմութեանը վրա կը զայրանան, ու մարդ մը ղրկելով հոն իրենց տուած գպրոցական պիտոյքները ամբողջն ալ կը հաւաքեն կը բերեն ու գպրոցը կը փակեն։ Կը վախցուի որ կէմրցիներուն փոխ տուած արմտիքը կամ դրամներն ալ ուզեն, որով խեղճերը պիտի նեղուին։

Խորէն—Ս.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, մարտի 1-ին

Ուրախութիւնը կաթում է գիւղացու եւ ժողովրդի դէմքերից։ Բացի այն, որ այս տարի շատ մեծ առատութիւն է, հացի էժանութիւն, ներկայ եղանակները եւ ձմեռվայ ձիւնը շատ լաւ բերք են խոստանում։

Անհաւատալի արագութեամբ հացի գինը իջաւ, մեծ ցաւ պատճառելով ամբարատէրերին։ Դեռ երկու տարի առաջ էր, որ չը նայելով հունձի բարարար լինելուն, հացը առասպելական թանգութեամբ էր ծախվում, նոյն իսկ չէր էլ գտնվում։ Ամբարատէրերը ուրախութիւնից պարում էին, մեծամեծ կաշառներ տալով Ամիր-Նիզամին, մի մարդու, որ աշխատում էր միայն փող դիզել, ուշադրութիւն չը դարձնելով իրան յանձնված ժողովրդի սովամահ լինելուն։ Բայց հէնց որ նրան քշեցին եւ տեղը նշանակվեց ներկայ նահանգապետը, արդէն դրութիւնը սկսեց զգալի կերպով փոխվել, դէպի լաւը գնալ։ Բայց ամբարատէրերը ժպտում էին գիւական ժպիտով. նրանք սովորել էին դատաւորների առաջին աջողութիւնները տեսնել։ «Դեռ նոր է, կը սովորի» խօսում էին միմեանց մէջ կաշառքն ակնարկելով, որը, ոչ մի դէպքում չէր ընդունում նոր դատաւորը։

Անցաւ մի առժամանակ եւ ամբարատէրերը հիասթափվեցին, միաժամանակ մի խուլ կռիւ սկսելով անկաշառ Նիզամ-Սալթանէի դէմ, որ ուշադրութիւն չը դարձնելով հակառակորդների յարուցած խոչընդոտներին եւ չը գրաւվելով խոստացվող շլացնող ոսկու փայլից՝ իր գործը զարմանալի հաստատակամութեամբ (որ այնքան էլ սովորական չէ պարսից պաշտօնեաների համար) առաջ էր տանում։ Ուժով թէ քաղցրութեամբ, սպառնալիքով թէ համոզելով, աքսորելով թէ գանակոծութեամբ նա կարճ ժամանակամիջոցում կարողացաւ ամբարատէրերից եւ գիւղատէրերից բաւականաչափ ցորեն գնել որոշ գնով եւ ամբարելով՝ առնված գնից էլ պակասով (լիտրը 5—6 շահի) հացթուխներին բաժանեց այն պայմանով, որ սրանք էլ իրանց գնածից մի փոքր ցածր գնով (որ համեմատաբար քիչ օգուտ կը տար նրանց) հացը ծախեն, հակառակ դէպքում պատասխանատուութեան կենթարկվեն։

Այս խելացի կարգադրութիւնը պարզ է, որ ամբարատէր-գիւղատէրերի դժգոհութիւնն ու թշնամութիւնը աւելի գրգռեց նահանգապետի դէմ, եւ ահա մի դէպք եկաւ նրանց բարկութիւնը դադարեցնելու։ Նիզամ-Սալթանէն մի ամբարատէր մօլլայի գանակոծել եւ բանտարկել տուեց, որովհետեւ նա իր ցորենը չէր ցանկանում կառավարութեան ծախել։ «Տեսնված բան է, մտածել անգամ կարելի է—մօլլան ծեծվի. ինչ օրի ենք հասել. տեսէք մի «հասարակ» դատաւոր հոգեւորականին է ծեծում ժողովրդին բարիք գործելու անունով. այն ժողովրդի, որին հէնց իրան դէմ գրգռելը մեր ձեռքին է։ Միթէ մենք՝ հոգեւորականներս պատճառ չեղանք Ամիր-Նիզամին հեռացնելու. միթէ սա նրանից աւելի ուժեղ է», մտածում էր հարուստ, ցորենատէր կղերը, վստահ իր ուժի վրա։ Եւ իսկապէս եթէ վերոյիշեալ դէպքը տեղի ունենար մի ուրիշ ժամանակ, գուցէ մոլեռանդ ամբոխը քարուքանդ անէր նահանգապետի տունը, հեռացնէր, քշէր նրան, բայց այժմ քաղցած էր, այդպիսի չնչին բաների վրա ուշադրութիւն դարձնելու ժամանակ չունէր, նրան միայն հաց էր հարկաւոր, հաց, թող աշխարհը խառնվի, միայն ինքն կարողանայ հեշտութեամբ հաց գտնել։ Եւ չը նայելով գրգռողներին, նա հանդարտ էր եւ կարծես ուրախ այդ բանից. չէ որ այդ անաստուածներն են իրան սովի ճանկը գցողը։ Նա շատ արդար էր համարում մօլլայի կրած պատիժը եւ օրհնում Նիզամ-Սալթանէի «արեւը»։ Այսպէս անցաւ մի տարի. ամբարատէրերը տեսնելով, որ մինչեւ այժմ գործ դրած միջոցները նրան տապալելու համար իզուր անցան, ուրիշ զէնքեր ձեռք առան։ Կառավարութիւնը, յանձին Նիզամ-Սալթանէի, այս անգամ էլ յաղթեց եւ փրկեց ժողովրդին սովամահ լինելուց։ Ցորենատէրերը թէեւ զէնքերը ցած դրին. բայց գաղտնի որոգայթներ լարելուց չը դադարեցին։

Հեռատես նահանգապետը, նրանց բոլորովին ընկճելու համար, պահանջեց, որ տէրութեան պատկանելիք ցորենը։ տան (տասանորդ)։ փոխանակ մինչեւ այժմ սովորութիւն դարձած փողի։ Երեւակայեցէք, կառավարութիւնը 10 — 15 տարի առաջ փող պէտք ունենալով, պայման է կապում գիւղատէրերի հետ իր տասանորդ ցորենը փողով ստանալ այն ժամանակվայ գնի համեմատ խալվարը 3 թուման (6 ր.) եւ այդ չարունակվում էր մինչեւ այժմ, չը նայելով որ ցորենի խալվարը 30 թումանի էր բարձրացել։ Տեսան գիւղատէր-ամբարատէրերը, որ «սրա հետ գլուխ դնել չեն կարող», քանի որ ժողովուրդը նրա հետ է, իրանց խօսքին չէ լսում։ Ուրեմն ինչ անել, հնազանդվել. ուրիշ ճար չը կար, պէտք էր կատարել նահանգապետի կամքը։ Այդպէս էլ արին եւ նրան վրէժխնդիր լինելը մի յարմար առիթի թողնելով, յետ քաշվեցին ասպարէզից, բայց մի վերջին յուսով, թէ յաղթված մարդու անմիտ կամակորութեամբ դեռ գաղտնի ամբարները լիքը թողեցին։ Հետեւանքն ապշեցնող էր, հաշիւները սխալ. երբ արդէն առատութիւնն ու լիութիւնը տիրում էր ամեն տեղ եւ հացի գինը բարձրանալու ոչ մի յոյս չը կար, ամբարները բաց անելով՝ տեսան մեծ մասը այրված, փտած...

Անցեալ տարի հացն իջաւ, երկու տարի առաջվայ հետ համեմատած՝ կէս գնի, իսկ այս տարի աւելի կիջնի եւ արդէն իջել է։ Երկու տարի առաջ Սալմաստում ալիւրի բեռը ծախվում էր նախ 8, ապա 10 թումանով, անցեալ տարի իջաւ 4—5 թումանի, իսկ այժմ, որ աւելի պիտի թանգանար ըստ սովորականին, ծախում են 25 ղռանով (5 ր.)։ Թաւրիզում անցեալ տարի ցորենը ծախվում էր 15 թումանով (30 ր.), այժմ 10, նոյն իսկ 8 թումանով, մի գին, որ ահա 6—7 տարի է Թաւրիզը չէ տեսել։

Ահա թէ ինչ կարող է անել ժողովրդի բարիքը ցանկացող, անկաշառ դատաւորը, որ, լուրերին նայելով, իր հիւանդութիւնը առաջ բերելով (բայց աւելի Ատրպատականից զզվելով) հրաժարական է տուել, բայց վեհափառ Շահը չէ ընդունել։

Ֆարրօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մենք արդէն հաղորդել էինք, որ անգլիական կառավարութիւնը վճռականապէս հակառակվեց թոյլ տալ, որ հարաւ-ափրիկական գործիչ Մէրրիմոն Զաուէր ներկայանայ համայնքների ժողովին եւ բացատրէ իրերի իսկական դրութիւնը Հարաւային-Ափրիկայում։ Կառավարութեան այս վարմունքը նկատի առնելով, իրլանդական շրջաններում քննվում է հետեւեալ նախագիծը։ Իրլանդական պատգամաւորներից մէկը կը հրաժարվի իր տեղից եւ այս բացված տեղի համար պատգամաւոր կընտրվի Զաուէր։ Այսպիսով Կապի գաղթականութեան ափրիկանդէրների կոմիտէի անդամներից մէկը հրաւիրութիւն կունենայ յայտնել իր կարծիքը համայնքների ժողովում հարաւ-ափրիկական հանրապետութիւնների ապագայ վիճակը կարգադրելու հարցի մասին։ Ջօն Ռէդմոնդ եւ նրա ընկերները բարեհաճ աչքով են նայում այս ծրագրի վրա, որը, երեւի, շուտով կիրագործվի։

—Բոլգարական «Ռէֆորմա» լրագիրը մերկացումներ է անում բալկանեան պետութիւնների գաղտնի դաշնագրութեան մասին։ Լրագիրը հաւատացնում է, թէ սերբ-չերնոգոր-բոլգարական դաշնակցութիւնը յիրաւի կապվել է 1897 թուին, երբ սերբիական Ալէքսանդր թագաւորը այցելեց Սոֆիա։ Դաշնակցութեան էութիւնը մի համաձայնութիւն էր Մակեդոնիան երեք դաշնակիցների մէջ բաժանելու վերաբերմամբ։ Սերբիան պէտք է ստանար Մակեդոնիայի արեւմտեան մասը։ Սակայն Բոլգարիան շուտով հրաժարվեց դաշնակցութիւնից, որովհետեւ Բոլգարիայի մէջ Մակեդոնիան այս տեսակ բաժանելու եղանակը համակրութիւն չէր գտնում։ Նրանից յետոյ, երբ յայտնի դարձաւ Աւստրօ-Ունգարիայի նախագիծը երկաթուղային գծեր չինելու Բալկանում, նորից փորձ փորձվեց վերաստեղծելու չաջողված դաշնակցութիւնը, բայց Բոլգարիան այս անգամ եւս հրաժարվեց միանալ դաշնակցութեան։ Այս վերջին վերկացումը առիթ է տալիս սերբիական մամուլին յարձակումներ գործել Բոլգարիայի վրա եւ սպառնալ, որ սերբ-չերնոգորիական դաշնակցութիւն կը կազմվի Բոլգարիայի դէմ Թիւրքիայի աջակցութեամբ։

—Պեկինում դեսպանական թաղ կազմակերպելու վերաբերմամբ «Kölnische Zeitung»-ի թղթակիցը հետեւեալն է հաղորդում. «Թեպէտ դաշնակից զօրքերը յետ կանչելու ժամանակամիջոցը դեռ եւս ծածկված է թանձր խաւարով, այնու ամենայնիւ, դաշնակից զօրաբաժինների օֆիցէրներից կազմակերպված մի մասնաժողով արդէն հիմա զբաղվում է դեսպանական թաղի պաշտպանութեան հարցով։ Զինական գործակալները խաղաղութեան բանակցութիւնների հէնց սկզբից պնդում էին, որ ամենից առաջ որոշվեն դեսպանական թաղի սահմանները։ Պեկինը գրաւելուց անմիջապէս յետոյ՝ դեսպանութիւնների մեծամասնութիւնը իւրացրեց մօտակայ տներն ու այգիները եւ յայտարարեց նրանց դեսպանութիւնների սեփականութիւն։ Դա անվում էր շատ հասարակ կերպով. բարձրացնվում էր դրօշակ եւ յայտարարվում. «Այս տեղը գրաւված է այս ինչ դեսպանութեան կողմից»։ Եւ հողեր տիրելու այս եղանակը բոլորովին բաւարար էր համարվում ապահովելու պետութիւնների իրաւունքները այդ նոր հողերի վրա։ Շնորհիւ այսպիսի գրաւումների, դեսպանատների հողաբաժինները ընդարձակվել են եւ նրանց պաշտպանութիւնը դարձաւ աւելի բարդ»։

—Անգլիական լրագիրները մեծ նշանակութիւն են տալիս այն բանին, որ Կարուն գետի վրա նաւագնացութիւն է բացվում, որովհետեւ դա միակ նաւագնաց գետն է Պարսկաստանում, եւ մատնացոյց են անում Շուստէրից (Կարունի վրա) մինչեւ Սպահան նախագծվող ճանապարհի նշանակութեան վրա, որովհետեւ այդ ճանապարհը շատ աւելի կարճ է այժմ գոյութիւն ունեցող Բուշիր-Սպահան ճանապարհից։ Այդ ճանապարհի կառուցումից յետոյ ճանապարհորդութիւնը կը կրճատվի չորս օրով, որը, անկասկած, նպաստաւոր ազդեցութիւն կունենայ բրիտանական առեւտրի եւ Մեծ-Բրիտանիայի յարաբերութիւնների վրա Պարսկաստանի հետ։

—Բիտօլիայից գրում են Սոֆիայի «Български Търговски Вѣстникъ» լրագրին, թէ առեւտուրը Մակեդոնիայում ներկայումս բոլորովին կանգ է առել եւ ոչ մի առեւտրական գործ չէ կատարվում։ «Վաճառականները, —գրում է թղթակիցը,—լիքն են մանր ու խոշոր անասուններով եւ զանազան արտադրութիւններով, բայց գնողներ ամենեւին չը կան։ Երկրագործը վախենում է դաշտ դուրս գալ իր արտերը վարելու։ Արհեստաւորները կիսաքաց են պահում իրանց արհեստանոցները։ Ամենքը տխրել եւ յուսահատվել են եւ չը գիտեն, թէ ինչ կը լինի այս բոլորի վերջը։ Զառամեալ ծերունիներն անգամ չեն յիշում, որ երբ եւ իցէ գործերի դրութիւնը այսպէս խառն ու շփոթ եղած լինէր երկրի մէջ, ինչպէս հիմա։ Ուշիշ է, եղել են եւ աւելի վատ ժամանակներ, բայց կեանքը երբէք այնպէս չէ դադարել, առեւտուրն այնպէս կանգ չէ առել եւ դրութիւնն այնքան անապահով չէ եղել, ինչպէս ներկայումս։ Ամենքը ահով ու երկիւղով ձգտում են մի բանի միայն—որքան կարելի է սի քանի աւելորդ կոպէկ ձեռք բերելու. եւ այս ոչ թէ անձնական նիւթական ապահովութեան համար, այլ նրա համար, որ հնարաւորութիւն ունենան կալանաւորման դէպքում փրկանք առաջարկել եւ գնել իրանց ազատութիւնը, որովհետեւ այժմ փողը ամեն ինչ է. ով փող ունի՝ թիւրքերը նրան ձեռք չեն տալիս, ի հարկէ առաջուց կողոպտելով մինչեւ վերջին չափիկը։ Խուզարկութիւնները եւ ձերբակալումները գիշեր-ցերեկ չեն դադարում։ Փոքր ինչ աւելի աչքի ընկնող ուսուցիչները եւ գիւղացիները մի քանի անգամ ձերբակալված ու արձակված են։ Զեւականապէս իւրաքանչիւր գիւղացի իրաւունք ունի ուզեւորվել գիւղից քաղաք եւ ծախելու իր ապրանքը, բայց իսկապէս գիւղացիներին խստիւ արգելված է հեռանալ իրանց գիւղերի սահմաններից։ Այս պատճառով էլ առեւտուրը կանգ է առել, աշխատանքը դադարել է եւ ընդհանուր սովն անխուսափելի է»։

—Սոֆիայի «Вечерняя Почта» լրագիրը հաղորդում է, թէ Բելգրադի ուսանողական ընկերութիւնը մի բարեկամական նամակով հրաւիրեց բոլգարական ուսանողներին ընկերական տեսակցութեան, որ պէտք է կայանայ ապրիլի 6-ին սերբիական սահմանամերձ Ժէլիւշա գիւղում։ Բոլգարական ուսանողները հրճուանքով ընդունեցին իրանց սերբիական եղբայրակիցների հրաւէրը եւ իրանց կողմից հրաւիրեցին նրանց Ցարիբրոդ եւ Սոֆիա։ Ցիշված լրագիրը, հաղորդելով այս լուրը, ողջունում է սերբ-բոլգարական բարեկամութեան առաջին քայլերը։

—Շվէդական պարլամէնտի երկու ժողովներն եւս մօտ օրերում մերժեցին Նիստրէմ պատգամաւորի կողմից առաջարկված օրինագիծը մահվան պատիժը վերացնելու մասին։ Առաջին ժողովը մինչեւ անգամ քննութեան չենթարկեց հարցը եւ մերժեց առանց քուէարկութեան։ Երկրորդ ժողովում առաջարկութիւնը տաք վիճաբանութիւններ ծագեցրեց, բայց մեծամասնութիւնը, գտնվելով Շվէդիայում նորերումս կատարված մի զարհուրելի սպանութեան տպաւորութեան տակ, կարծիք յայտնեց, թէ անհրաժեշտ է պահել մահվան պատժի օրէնքը։

„ՄԵԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

27 մարտի

Պէկին։ Այսօր, Վալդերզէէի նախագահութեամբ, ձմերային պալատում կայացաւ դաշնակից պետութիւնների բոլոր հրամանատար գեներալների խորհրդակցութիւն։ Քննութեան առարկաներն էին Զինաստանի հետ կապվելիք համաձայնութեան 8 եւ 9 յօդուածները. այդ երկու յօդուածներն եւս միաձայն ընդունվեցին եւ հարցի գործնական վճռի վերաբերմամբ համաձայնութիւն կայացրին։ Կաբինէտներին տեղեկութիւն է տրված դրա մասին։

Բէլգրադ։ Նոր սահմանադրութեան նշանաւորագոյն որոշումները այժմ յայտնի դարձան։ Սահմանադրութիւնը ապահովում է ամենքի համար կատարեալ հաւասար իրաւունքներ՝ մամլի, խղճի եւ կրօնի ազատութեան հետ միասին։ Մամուլը կատարելապէս ազատ կը լինի, ենթարկվելով միմիայն դասակարգային դատարանին. ընտրութիւնների ազատութիւնը նոյնպէս ապահովված է։ Նոր սենատը բաղկացած կը լինի 51 անդամից, որոնց թիւում մտնում են՝ թագաժառանգը, եթէ այդպիսին կը լինի, չափահաս դառնալուց յետոյ, սերբիական միտրոպոլիտը, Նիշի եպիսկոպոսը, թագաւորի կողմից ցմահ նշանակված 30 անդամներ եւ 18 անդամներ, որոնք ընտրվում են գաղտնի քուէարկութեամբ իւրաքանչիւր շրջանից մէկ մարդ, իսկ Բէլգրադից երկու հոգի։ Սենատի ընտրութիւնների ցէնզը որոշված 45 ֆրանկ ընտրողի համար եւ 400 ֆրանկ ընտրվողի համար։

Բերլին։ Կայսրը էկսօրին ընդունեց անգլիական արտակարգ դեսպանութիւնը, որը, եկել էր տեղեկացնելու Էդուարդ թագաւորի գահ բարձրանալը։

Շանղհաի։ Ֆինանսների վարչութեան նախագահը, ժանջուր Ցինրին, որ ներկայումս ճանապարհվել է դէպի Սիանֆու, իր հետ է բերում Պեկինի ամբողջ ազգաբնակութեան յայտագիրը, որի մէջ կայսրին ուղղված է խնդիրք՝ վերադառնալ Պէկին եւ վերականգնել խաղաղութիւնը պետութիւնների հետ ձեռք ձեռքի տուած։

Լոնդոն։ Ինչպէս կիսաչենէր հեռագրով հաղորդում է Պրէտորիայից, Պլումէր գրաւեց Պիտէրսբուրգ եւ աւար վերցրեց երկու չոգեկառք եւ 36 վագոններ, այնպէս որ բօէրները միայն թոյլ դիմադրութիւն ցոյց տուին։ Սմիտֆիլդից ոչ հեռու, Բօրմանսկօպի մօտ, անգլիացիները գերի վերցրին 16 բօէրների, խլեցին 50 ձիեր եւ պատերազմական պաշարներ։ Իբերգինից դէպի հիւսիս 400 մարդուց բաղկացած բօէրական զօրաբաժինը յարձակում գործեց մօտ 100 ուլանների եւ եօմանրի զինուորների վրա քաղաքից 10 մղոն հեռաւորութեան վրա։ Մինչեւ լուսաբացը շարունակվող դիմադրութիւնից յետոյ նրանք չրջապատվեցին եւ գերի տարվեցին. ազատվեցին միայն 25 մարդ։

Կոպենհագէն։ Անգլիական թագուհին այսօր արտակարգ գնացքով ճանապարհ ընկաւ։ Թագուհին գնում է Կրօնբէրգ այրի կայսրուհի Վիկտորիայի հետ տեսակցելու համար։

Պէկին։ Լիխունգչանգ եւ Ցին տեղեկութիւն ստացան, որ պալատը անհանգստութեան մէջ է այն ապստամբութեան պատճառով, որ բռնկել է Մօնգոլիայի եւ Շէնսիի նահանգներում եւ որի գլխավարն է Տունֆուսիան։ Վերջին տեղեկութիւններից երեւում է, որ Տունֆուսիան 11,000 լաւ վարժված զօրքերի գլուխ է կանգնած եւ գտնվում է 150 մղոն հեռու Սիանֆուից։

Պէկին։ Մարտի 26-ին Վալդերզէէի նախագահութեամբ գեներալների ժողով կայացաւ, ուր վճռվեց վեց հազար զինուորներով գրաւել Պէկին-Շանղհայգուան ճանապարհի ինն կէտեր երկար ժամանակով. բացի դրանից 2000 մարդ պահել Պէկինում եւ մասնակցող կառավարութիւնների ցանկութիւնների համեմատ՝ պակասեցնել Զինաստանում գտնվող զօրքերի թիւը. իսկ Պաոտինֆու-Պէկին երկաթուղին չը պէտք է գտնվի հսկողութեան տակ, որովհետեւ չէ ծառայում որպէս հաղորդակցութեան գիծ ծովի հետ։ Գեներալ Զաֆֆի եւ գեներալ Բօգան չը համաձայնվեցին այդ կարծիքի հետ։ Զաֆֆի կարծում էր, որ գրաւել պէտք է միայն երկու կէտ Պէկինի եւ ծովի միջեւ, այն է Եանցզուն եւ Տեանձին, եւ երեք կէտ Տեանձինի եւ Շանղհայգուանի միջեւ, որի համար բաւական կը լինի ընդամենը 2000 մարդ, եթէ չը հաշուել Պէկինում գտնված զօրքերը։ Տօնկիում, նրա կարծիքով, զօրքեր հարկաւոր չեն, որովհետեւ այնտեղ միշտ կան պատերազմական նաւեր եւ փոփոխվող զօրքերը միշտ գնալ գալիս կանցնեն այն տեղով։ Գեներալ Բօգան այն կարծիքի էր, որ գրաւել պէտք է միայն Տեանձինը եւ Շանղհայգուանը, որի համար բաւական է ընդամենը 2000 մարդ։ Մեծամասնութեան հայեացքները կը ներկայացվեն դեսպաններին, խնդրելով անյապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել,

որովհետեւ գեներալները կարծում են, որ եթէ Զինաստանը կընդունի այդ պայմանները եւ կը համաձայնվի քանդել Շանդհայգուանի, Բէյդանի, Տակուի, Բէյցինի եւ Եանցունի ամրութիւնները, դա հաւասարազօր կը լինի նրա կատարեալ խոնարհութեան եւ այն ժամանակ կարելի կը լինի վճիռ կայացնել Զինաստանից զօրքերի մեծ մասը հեռացնելու վերաբերմամբ։ Ապա գեներալները խորհրդակցեցին այն միջոցների մասին, որ պէտք է ձեռք առնվեն խաղաղութեան դաշն կապելուց յետոյ, օտար զօրքերով Պէյժիլիի գրաւված մասերը չինական քաղաքացիական իշխանութեանը յանձնելու նպատակով։ Վերջը քննութեան ենթարկվեցին աւելի պակաս նշանակութիւն ունեցող զանազան հարցեր։

ՏՕԿԻՕ։ Ոչ մի ճիշդ խօսք չը կայ Եապօնիայի պատերազմական պատրաստութիւնների կամ նրա որ եւ է պահանջների մասին տարածված լուրերի մէջ։

28 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա մարտի 27-ին Կոպէնհագէնից ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

Բարձրագոյն հրամայված է Սուրբ Զատկի տօնի համար գալ Ձմերային Պալատը դիւերվայ հսկում կատարելու այն բոլոր անձանց, որոնք մուտք ունեն Պալատում։

Պետերբուրգի դատաստանական պալատը, դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ, մարտի 27-ին քննելով տիտուլեարնի սովէտնիկի որդի Նիկոլայ Կոնստանտինով Լազովսկու գործը, որը մեղադրվում էր Սուրբ Սինոդի օբէր-պրոկուրորի դէմ նախատած սպանութեան փորձ անելու մէջ, վճռեց, մեղադրվող Նիկոլայ Լազովսկուն զրկել բոլոր իրաւունքներից եւ տաժանակիր աշխատանքներին ենթարկվեցին աւելի պակաս նշանակութիւն ունեցող զանազան հարցեր։

ԽԱՐԿՈՎ։ Զինուորական դատարանը հետեւեալ դատավճիռը կայացրեց դրաղունների 29-դ գնդի ազատակամ զինուոր կոմս Գոլովկինսկոյ-Խվոշչինսկու գործի վերաբերմամբ, որը մեղադրվում էր ֆրանսիական քաղաքացի Սերվիէին վիրաւորելու համար։ «Ցանցաւոր հարաբելով մեղադրեալին բարկացած ժամանակ երկու վէրք հասցնելու համար, որոնք ծանր են ընաւորութեամբ, բայց առանց նախատատած մտադրութեան, դատարանը որոշեց կոմս Գոլովկինին արտաքսել զինուորական ծառայութիւնից, զրկել զինուորական կոչումից, տիտղոսից, ազնուականութիւնից, առանձին իրաւունքներից եւ արտօնութիւններից եւ բանտարկել ութ ամսով։

ՍԱՄԱՐԱ։ Վոլգայի վրա սառույցը շարժվում է։

ԶԻՍՏՕՊՕԼ։ Տաք է եւ անձրեւ. կամա գետը բացվեց։

ԳՐՕԴՆՕ։ Դաշտերը կատարելապէս մաքրվեցին ձիւնից. գարնանային տաք եղանակ է եւ պատահում են տաք անձրեւներ։

ՏՈՒԼՕՆ։ Գէնուայի դուքսը առաւօտեան փոխադարձ այցելութիւն գործեց ծովային պրէֆէկտ Բոմօնին։ Երբ դուքսը իջաւ ծովապետական «Էլեանտոս» նաւից, վերջինից սովորական ձեւով ողջունեցին թնդանօթաձգութեամբ։ Ֆրանսիական նաւերը պատասխանում էին։ Դուքսը, ափ իջնելով, ականատես եղաւ ծովային հետեւակ գնդի զօրահանդէսին եւ շնորհաւորեց գեներալ Կօրօնին զօրքերի քաջարի տեսքի համար։ Դրանից յետոյ դուքսը, ուղեկցված կիրասիրներով, կառքով գնաց դէպի պրէֆէկտուրա։ Զօրքերը երկկարգ կանգնած էին ամբողջ ճանապարհի վրա եւ երաժշտութիւնը նուագում էր։ Բոմօն ողջունեց նրան, ջերմ կերպով սեղմելով նրա ձեռքը. խօսակցութիւնը նոյնպէս շատ սրտագին էր։ Դուքսն ասեց, թէ ուրախ է ինքն Տուլօն գալով մինչեւ Լուբէի գալուստը, որ հնարաւորութիւն տուեց իրան ծովապետի եւ օֆիցէրների հետ բարեկամական եւ ոչ թէ պաշտօնական յարաբերութիւնների մէջ մտնել։ Բոմօն շնորհակալութիւն յայտնեց եւ դրեց իրան դուքսի արամադրութեան տակ՝ Տուլօնի շրջակայքը տեսնելու համար։ Դուքսը պատասխանեց, թէ ստիպված է արդէն շաբաթ օրը հեռանալ Տուլօնից, որովհետեւ իր արձակուրդի ժամանակամիջոցը լրանում է։ Խօսակցութիւնը տեւեց քսան րոպէ։ Ազգաբնակութիւնը ամեն տեղ բուռն ցոյցեր էր անում նրան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)

տարբերութիւնը 58 րոպէ։

—

№ 5 գնացքը։

Բագուից դուրս է գալիս	ցեր.	3 ժ.	5 ր.
Թիֆլիս է հասնում	առ.	8 »	23 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 »	3 »
Բաթում է հասնում	եր.	9 »	11 »

№ 3 գնացքը։

գիշ.	11 ժ.	15 ր.
եր.	5 »	35 »
եր.	6 »	30 »
առ.	7 »	10 »

№ 6 գնացքը։

Բաթումից դուրս է գալիս	առ.	8 ժ.	56 ր.
Թիֆլիս է հասնում	եր.	8 »	42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 »	22 »
Բագու է հասնում	ցեր.	1 »	25 «

№ 4 գնացքը։

եր.	10 »	ժ.	47
առ.	11 »	18 »
»	12 „	36 »
»	7 »	— ր.

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	. . . .	առաւ.	7 ժ.	56 ր.
Բագու է հասնում	. . . . .	երեկ.	9 »	— »
Բագուից դուրս է գալիս	. . . .	առաւ.	6 »	50 »
Թիֆլիս է հասնում	. . . . .	երեկ.	8 »	12 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.		երեկ.	10 ժ.	—
Ալէքսանդրօպոլ հասնում է	. . .	առ.	8 »	27 ր.
Կարս հասնում է	. . . . .	ցեր.	12 »	23 »
Կարսից դուրս է գալիս	. . .	ցեր.	4 . »	12 »
Ալէքսանդրօպոլ հասնում է	. . .	երեկ.	7 »	10 »
Թիֆլիս հասնում է	. . . . .	առ.	6 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրոնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՆ օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գգելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), և վներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիսեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Եկատերինօդար քաղաքում

Կրասնայա եւ Կիրպիչնայա փողոցների անկիւնում, եղբ. Տարասովների առեւտրական տան մօտ, ծախվում է անկիւնի պլանաւոր տեղ, խանութներով, որոնք իւրաքանչիւր տարի 4410 րուբլի վարձ են բերում, կամ տրվում է վարձով երկար ժամանակամիջոցով։ Գնի մասին տեղեկանալ տիրոջից—Կրիչտոֆովիչից—Պոլտավա քաղաքում, տուն Կատրանովի։

1—2

Լոյս տեսաւ

Բժ. Վ. ԱՐԾԵՐՈՒՆՈՒ

„ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ“

№ 1

„Մ Ի Խ Մ Ի Ր“

Գինն է 5 կոպ.

Ծախվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում եւ հեղինակի մօտ։ Հեղինակի հասցէն. Тифлисъ. Доктору Вагр. Арцруни. 5—10

Շուտով լոյս կը տեսնի

ԱՐՇԱԿ ԿԱՑԾՈՒՆԻ

ԴԷՊԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

պատմական եւ տեղագրական նկարագրութիւններ

Գինը 1 բուբլի։

Դիմել՝ Шуша, Аршаку Кайцуни.

Շուտով կը յանձնվին տպագրութեան

I

ՔՆԱԾ ԱՌԻԻԾԻ ՊԱԼԱՏՈՒՄ

ԶՐՈՑՑ

II

ՆՇՄԱՐՆԵՐ

առաջին պրակ

Բովանդակութիւն.—Շուշուայ հայոց կօնսիստորիան. Աչոտ վարդապետ եւ Գառնակերեան. Բեսարաբիայի, Նոր-Նախիջեւանի եւ Խրիմի հայերը, եկեղեցիները եւ քահանաները։

(չ. հ. չ.) 6—6

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Յ. Յ. ՂՈԿԻԷԼԵԱՆԻ

Ընդունում է՝ վէներական, ախտական, մորթու եւ ներքին հիւանդութիւն ունեցողներին։

Առաւօտեան 9—12 ժամը

Երեկոյեան 5— 8 ժամը.

Միխայլովսկայա եւ Նէմեցկայա փողոցների անկիւն, տուն Սլիվիցկու, մուտքը Նէմեցկայա փողոցից։ 9—25

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տպիս և կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, ընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրեանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագուում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

88—100

Վիէննայում լոյս տեսաւ

„ԶԻՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՆ“

I մաս

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կարիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.

(Ճանապարհածախքով 1 ր. 75 կ. կամ 4 ֆր.)

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, կամ Тифлисъ. Галусту Գալուստյան, իսկ արտասահմանից Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/2, Mechitharistengasse 4.

(ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՍԱԿԱՒԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ)

(հ. չ.) 5—5

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ եւ ԸՆԿ.

յանձնարարում է

անուշահոտ

„ԶՐԱՑԻՆ ՇՈՒՇԱՆ“

Զօրեղ եւ հաճելի բուրմունք

ԾԱՂԿՆԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ

ՕԾԱՆԵԼԻՔ

ՍԱՊՈՆ

ՊՈՒԴՐԱ

№ 104055 (25) 2—10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

վաճառվում են հետեւեալ նոր լոյս տեսած գրքերը՝

Արծրունի բժ. Վ. Մի խմիր—գ. 5 կ.։
Աբովեան Խաչատուր, Երկերի (Վէրք Հայաստանի եւ այլն) ժողովածու, հեղինակի լուսանկարով, Մոսկվա, 1 ր. կազմով՝ 1 ր. 40 կ. եւ 1 ր. 75 կ.։
Հայկունի Ս., Թագաւոր Լուսիկ եւ Սետեւ Հովիկ, Վաղարշապատ 1900 թ. 25 կ.։
Յարութիւնեան Իս., Իմ օրագիրը, Թիֆլ. 1901 թ. 25 կ.։
» Նոր-Նախիջեւանի ս. Խաչ վանքը, Թիֆլ. 1901 թ. 40 կ.։
Շահ-Նազարեանց Ս. բժ., Մարդասիրութեան եւ աշխատանքի ազնիւ զինուորը՝ Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկիյ, Մոսկ. 1901 թ. 60 կ.։
Պատկանեան Ռափայէլ, Ընտիր երկասիրութիւնները, երկու հատորով, Ս. Պետր. 4 ր. կազմով 4 ր. 60 կ. եւ 5 ր.։
Տէր-Աստատրեան, Գեղարուեստական ալբոմ հայ գործիչների, 32 պատկեր. Թիֆլ. 3 ր.։
Թառայեանց Ս. Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Թիֆլ. 1898 թ. գ. 40 կ.։
» Ընտանիքի կեանքը, Բագու, 1899 թ. գ. 20 կ.։
» Գեօտէ (պատկերով), Թիֆլ, 1900 թ. գ. 30 կ.։

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральную Книжную Торговлю.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴՈՑ ՍՈՒԵՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Ֆիրման գոյութիւն ունի 1858 թուից)

Թիֆլիսի մի քանի ծխախոտի գործարաններ իրանց պատրաստած պապիրոսների էտիկէտները սկսել են նմանեցնել մեր էտիկէտներին, որ եւ այդ արտաքին նմանութիւնը մեր մշտական գնողներից շատերին բազմիցս սխալանքի մէջ է գցել։ № 8 պապիրոսները պարունակվում են կարմիր ծրարներում՝ 10 հատը 5 կոպ. արժողութեամբ, արկղիկներում՝ 10-ը 10 կոպ., իսկ № 15 «Սիմպատիա» 10 հ. 5 կոպ. եւ № 7—10 հ. 3 կոպ.։

Ուստի Առեւտրական տունը խնդրում է ուշադրութիւն դարձնել Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴՒՔ մակագրութեան վրա։

(Ե. հ. կ.) 3—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից ուրբաթ, մարտի 30-ին (ապրիլի 12)—չոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան ՇԻԼԹ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են ծովորակ մնից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ տալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխօվի եւ Մայտուրաձէի քարվանսարա։ ԲԱԴՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27. ՆՕՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն։

(Ե. հ. չ.) 3—20

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Марта 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27